ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերապատրաստում և գործառնական համագործակցություն (TOPCOP)



Իրականացման ժամանակահատված: 01.07.2020 - 01.07.2024

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 6 000 000

Ընդհանուր բյուջե: € 6 000 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

CEPOL, EUROPOL

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

Նախագծի կայքէջ: cepol.europa.eu/projects/topcop

Նախագծի նկարագրություն:

«Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերապատրաստում և գործառնական համագործակցություն» ծրագիրը մաս է կազմում մի բազմամյա աշխատանքային ծրագրի, որի ընդհանուր նպատակը կազմակերպված և ծանր միջազգային հանցագործությունների նվազեցումն է Արևելյան հարևանության տարածաշրջանում: Առաջարկվող գործողությունն ուղղված է Արևելյան հարևանության տարածաշրջանում, ԵՄ անդամ երկրներում և ծանր ու միջազգային կազմակերպված հանցավորության կանխարգելման և հակազդման բնագավառում գործող ԵՄ գործակալությունների հետ համագործակցության բարելավմանը՝ համաձայն ԵՄ քաղաքականության ցիկլի: Ծրագիրը նպատակ ունի բարելավել համագործակցության որակը և երկարաժամկետ հեռանկարում կայունացնել այն: Եվրոպական միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալությունը (CEPOL) մտադիր է կիրառել ուսուցման միջոցով ԵՄ իրավապահ մարմինների համագործակցության դյուրացման համար օգտագործվող համանման մեթոդաբանություններ և ընդլայնել ԵՄ համագործակցության գործիքների առկա շրջանակը՝ միաժամանակ առաջարկելով անհրաժեշտ ճկունություն և հարմարվողականություն՝ տարածաշրջանի գործընկեր երկրների կարիքները բավարարելու համար: Ծրագիրը կօգնի ԱլԳ յուրաքանչյուր գործընկեր երկրում համակարգողի ընտրությանը, որը պատասխանատու կլինի ռազմավարական տվյալների հավաքագրման համար: Կմշակվի «ԱլԳ սպառնալիքների գնահատում» փաստաթղթի նախագիծ՝ կենտրոնանալով կազմակերպված հանցավորության հետ կապված սպառնալիքների վրա: Նպատակներից մեկն էլ գործիքի տրամադրումն է, որը

Ակնկալվող արդյունքներ:

- Ընդլայնված գործառնական և ռազմավարական համագործակցություն ԵՄ անդամ պետությունների և ԵՄ գործակալությունների հետ, այդ թվում՝ EMPACT-ի միջոցով.
- Արևելյան գործընկեր երկրների իրավապահ մարմինների՝ կազմակերպված և ծանր միջազգային հանցագործությունների դեմ պայքարելու կարողությունների ամրապնդում՝ իրականացված կարիքների վերլուծության հիման վրա.
- Հետախուզության վրա հիմնված օպերատիվ պլանավորում Արևելյան հարևանության տարածաշրջանի երկրներում: